“...ՀԵՌԱՑԵ՛Ք, ԴՈՒՔ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԱԽԱՏԻՆՔՆ ԵՔ...”

Posted on March 13, 2011 by Keghart



Category: Opinions

Համո Մոսկոֆյան, Պեյրութ, 13 Մարտ 2011

> *«Ծոցից Ովկիանոս» Արաբական Աշխարհի Ժողովուրդները Զզվել Են Հետախուզական Վարչությունների, Մատնիչ-լրտեսների, Բանտերի ու Բոնապետների կեղծ «Պաշտամունք»-ի Վարչակարգերից*

20-րդ դարի երկրորդ տասնամյակին, երբ բրիտանական կայսրության լրտեսապետներ Լորանսի, Մկմահոնի, Սըր Ջոն Ֆիլփիի, Գերդրուդե Բելի և այլոց ”ջանքերով” արաբական աշխարհը դուրս եկավ օսմանյան կայսրության բռնատիրությունից՝ այս անգամ երկու տասնյակ պետությունների վերածվելով՝ անցավ արևմտյան իմպերիալիստական վարչակարգերի՝ գլխավորաբար “Մեծն” Բրիտանիայի ու Ֆրանսիայի իշխանության տակ։ Արաբական Ծոցից մինչև Ատլանտյան ովկիանոս տարածվող, արաբախոս ու բազմակրոն այս հսկայական աշխարհագրական հարուստ “ցամաքամասը” փաստորեն դարձավ նաև Բ. Աշխարհամարտի տարիներին՝ Դաշնակիցների և Անտանտի պետությունների կռվախնձոր՝ նավթի, գազի, թանկարժեք մետաղների, սննդամթերքների ու մարդկային ռեսուրսների որպես շտեմարան։

Համո Մոսկոֆյան, Պեյրութ, 13 Մարտ 2011

> *«Ծոցից Ովկիանոս» Արաբական Աշխարհի Ժողովուրդները Զզվել Են Հետախուզական Վարչությունների, Մատնիչ-լրտեսների, Բանտերի ու Բոնապետների կեղծ «Պաշտամունք»-ի Վարչակարգերից*

20-րդ դարի երկրորդ տասնամյակին, երբ բրիտանական կայսրության լրտեսապետներ Լորանսի, Մկմահոնի, Սըր Ջոն Ֆիլփիի, Գերդրուդե Բելի և այլոց ”ջանքերով” արաբական աշխարհը դուրս եկավ օսմանյան կայսրության բռնատիրությունից՝ այս անգամ երկու տասնյակ պետությունների վերածվելով՝ անցավ արևմտյան իմպերիալիստական վարչակարգերի՝ գլխավորաբար “Մեծն” Բրիտանիայի ու Ֆրանսիայի իշխանության տակ։ Արաբական Ծոցից մինչև Ատլանտյան ովկիանոս տարածվող, արաբախոս ու բազմակրոն այս հսկայական աշխարհագրական հարուստ “ցամաքամասը” փաստորեն դարձավ նաև Բ. Աշխարհամարտի տարիներին՝ Դաշնակիցների և Անտանտի պետությունների կռվախնձոր՝ նավթի, գազի, թանկարժեք մետաղների, սննդամթերքների ու մարդկային ռեսուրսների որպես շտեմարան։

Արաբական աշխարհի, աֆրիկյան տարածքների և Մերձավոր Արևելքի դարպասների համար է որ մղվեցին էլ-Ալամեյնի ու Ստալինկրատի ճակատամարտերը՝ որտեղ իրենց թանկագին արյունը թափեցին նաև հայ զինվորականներ։

«Բաժնիր և տիրի՛ր» հին հռովմեական տակտիկան ամենայն մանրամասնությամբ ու տասնամյակներ շարունակ գործադրվեցին նաև Բ. Աշխարհամարտից հետո ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրավիճակում: Մարդկային մշակույթի և արվեստի, գրականության թե արհեստների, բժշկության գանձեր պարգևած արաբական աշխարհի “գլխին” որպես նորելուկ “տեր”-եր կարգվեցին Լոնդոնի, Փարիզի, Վաշինգտոնի, Մոսկվայի, հլու-հնազանդ միջնադարյան-աւատապետական, կամ արյունարբու ստալինա-բերիական դաստիարակությամբ բռնապետներ:
1956 թվի Սվեզի համաշխարհային տանգնապից, Եգիպտոսի վրա կատարված արկածախնդրությունից հետո, երբ խայտառակ կերպով իրենց “լիտեր”-ի դերերը զիջեցին Բրիտանիան ու Ֆրանսիան Ամերիկայի, բռնապետների “վստահված առաքելություն”-ն էր “Բիսմարկյան” հուրով ու երկաթով, հետախուզական վարչությունների մատնիչ-լրտեսների, բանտերի ու բռնապետների, կեղծ “պաշտամունք”-ի սեփական անհատնում հարստություններ դիզող վարչակարգերի միջոցով վայրագ հնազանդության մեջ պահել արաբ (քրիստոնյա-մահմետական), ասորի, արամեացի, քուրդ, հայ, թուրքմեն, պարսիկ և այլ ազգությունների քաղաքացիներին: Միաժամանակ՝ ապահովել Իսրայելի անվտանգությունը, մանավանդ՝ 1973 թվի արաբ-իսրայելյան պատերազմից, “Քեմփ Դեյվիդ”-ի համաձայնագրից հետո, Լիբանանում հրահրված երկարամյա քաղաքացիական պատերազմի ու պաղեստինյան հեղափոխությունը պառակտելու վարկաբեկիչ քաղաքականությամբ:
Ջենգիզ խանն ու Թիմուրլենգը երևի իրենք նսեմանան իրենց արյունոտ պատմությամբ՝ արաբական աշխարհում թափված անմեղ մարդկանց արյան ծովերին ի տես...:

1947 թվից՝ Իսրայելի “ժողովրդավար” ղեկավարները մի կողմից՝ “յանձինս” Մոշե Դայանի, Իցհակ Շամիրի, Մենահիմ Բեկինի, Արիել Շարոնի, Ցիբի Լիվնիի, Բարակի եւ Նատանիահուի ստորագրած հրամանագրերով՝ մորթել, վառել, քարուքանդ են արել աւելի քան մեկ միլիոն արաբներին, պաղեստինցիներին ու ընկճել նրանց դարավոր բնակավայրերը: Միաժամանակ Իրաքի, Սուրիայի, Հորդանանի, Սաուդական Արաբիայի, Եգիպտոսի, Լիբանանի, Թունիսի, Ալժիրի, Մարոքի ինքնակոչ արքաների, բռնապետների, “Արև - ղեկավարների” զոհերն են, մի քանի միլիոն ազնիվ քաղաքացիներ, ընդդիմադիրներ, գրողներ ու մտավորականներ, գիտնականներ, արվեստի ու մշակույթի գործիչներ: Եմենի ներկա “ցմահ” նախագահ, նախկին բանակային Ալի Սալեհը՝ հարաւային Եմենի իր հայրենակից ղեկավարներին՝ օսմանյան դավադիր միջոցով գնդացրի “բռնեց” իբր թե “հաշտության” ժողովասրահում:
Տակավին կղզիախումբ Բահրեյնի “արքայիկ”ները դաժան դատաստան տեսան այս 21-րդ դարի թալանչի պետության ավատապետների դեմ ցույցի ելած սեփական ժողովրդի զաւակների դէմ:

Մինչ Վաշինգտոնում “կոկորդիլոսի” արցունքներ են թափում Օբաման ու Գլինթոնը իրենց դրածո խամաճիկների գործած անմարդկային ոճիրների համար՝ շարունակվում է պաղեստինյան հողերի, Երուսաղեմի հայապատկան թաղամասի զավթումը, սիոնիստ

ծայրահեղական ղեկավարների “Թել-Ավիվյան” կլանի կողմից, իսկ իր պատիվն ու արժանապատվությունը, “աթոռը” պաշտպանելու համար, իբր թե “նասերական” Քադաֆին Լիբիայի քաղաքների փողոցներում “հնձում” է ավելի քան 300 միլիարդ դոլար պետության ու ժողովուրդին պատկանող հարստության դեմ բողոքի ելած մարդկանց։

“Արաբ բռնապետներ. Հեռացե՛ք, դուք ժողովրդի նախատինքն եք...”։

Այսպես էր գրված Գահիրեի Ազատության հրապարակում տեղի ունեցած “Ցասման” ցույցին Եգիպտոսի խաբուած բազմաչարչար ժողովրդի պարզած մի ցուցանակի վրա՝ որն արդեն կիսով չափ ծածկված էր արյունով։ “Հեղափոխությունը սկսվեց ժողովրդային զանգվածների շարժմամբ, ու վերջ գտավ ռազմական հեղաշրջմամբ...”,- այս կարծիքը հանձնեց արաբական աշխարհի անվերջանալի դավերին ու քոալիցիային “մութ” քաղաքական խավերին սովոր, 1956-1967-1973 թվականների արաբ-իսրայելյան պատերազմներին մասնակից եգիպտացի “անդեմ” մի վետերան։